ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 291-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2021 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 291-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 5

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ 5

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 5

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 6

IV. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 9

V. 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 19

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

VI. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ 20

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 20

3. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ 21

4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21

5. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ 21

VII. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 21

VIII. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՊԵԿ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 22

IX. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 22

X. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՋՋԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ 23

XI. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ 23

XII. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 23

XIII. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ . 24

XIV. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ (COVID-19) ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՂՈՔԱՑՄԱՆ 23-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 24

XV. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 25

XVI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 25

XVII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 25

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 223-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215 որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի

ընդգրկող ժամանակաշրջանը	հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԵԿ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 223-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել Կոմիտեի 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեին վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից ՊԵԿ կողմից կատարվող ծախսերի տարեկան ճշտված պլանը՝ 70,024,130.7 հազ. դրամ: Ֆինանսավորումը՝ 64,242,358.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 63,804,164.4 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 64.645,189.1 հազ.դրամ:

ՀՀ ՊԵԿ 2021 թվականի վեց ամիսների բյուջեի ծախսերի կատարողականը ըստ միջոցառումների հետևյալն է.

(հազ.դրամ)

Ծրագիր Միջոցառում Հոդված		Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարման %-ը	Պլանի մնացորդ
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		**70,024,130.65**	**64,242,358.04**	**63,804,164.40**	**64,645,189.08**	**91.12**	**5,781,772.61**
1023	**Հարկային և մաքսային ծառայություններ**	**15,620,571.66**	**11,111,716.41**	**10,830,621.01**	**11,665,840.94**	**69.34**	**4,508,855.25**
11001	Հարկային և մաքսային ծառայություններ	8,757,354.70	8,111,985.36	7,831,249.26	8,716,659.87	**89.42**	**645,369.34**
	-Աշխատանքի վարձատրություն	6,827,837.80	6,827,837.80	6,551,191.18	7,263,604.95	**95.95**	**0.00**
	-Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր	1,929,516.90	1,284,147.56	1,280,058.08	1,453,054.92	**66.34**	**645,369.34**
11002	Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	2,429,280.00	1,376,280.00	1,376,280.00	517,232.03	**56.65**	**1,053,000.0**
31001	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	1,367,630.00	132,418.94	132,418.94	135,514.32	**9.68**	**1,235,211.06**
	- Վարչական սարքավորումներ	96,250.00	87,950.71	87,950.71	91,046.09	**91.38**	**8,299.29**
	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	315,380.00	44,468.23	44,468.23	44,468.23	**14.10**	**270,911.77**
	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	956,000.00	-	-	-	**-**	**956,000.00**
11004	Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսեր	2,835,000.00	1,351,728.00	1,351,728.00	2,175,263.42	**47.68**	**1,483,272.0**
11007	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	8,469.74	8,469.74	8,110.44	8,110.44	**95.76**	**0.00**
11005	Փորձաքննությունների ծառայություններ	4,664.30	2,552.85	2,552.85	2,552.85	**54.73**	**2,111.45**

11006	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	37,599.72	37,599.72	37,599.72	37,599.72	**100.00**	**0.00**
11003	Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններ	80,488.10	80,488.10	80,488.10	62,475.40	**100.00**	**0.00**
11009	Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից ՀՀ ՊԵԿ-ին հատկացվող կարճաժամկետ տեխնիկական աջակցություն	1,510.20	-	-	-	-	**1,510.20**
31003	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում	15,350.10	10,193.70	10,193.70	10,432.89	**66.41**	**5,156.40**
31004	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում	46,980.60	-	-	-	-	**46,980.60**
32001	Հաշվետվությունների ներկայացման համար բջջային տարբերակ	36,244.20	-	-	-	-	**36,244.20**
1102-12005	**Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնում**	**37,596,348.00**	**37,431,700.64**	**37,430,019.49**	**37,430,019.49**	**99.56**	**164,647.36**
1015-12001	**Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում**	**89,400.00**	**81,130.00**	**79,675.50**	**79,675.50**	**89.12**	**8,270.00**
1205-12009	**Փոխանցումներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին**	**12,293,110.99**	**12,293,110.99**	**12,293,110.99**	**12,293,110.99**	**100.00**	**0.00**

1224-11009	Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության տրամադրում	4,424,700.00	3,324,700.00	3,170,737.41	3,170,737.41	71.66	1,100,000.0
8984	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	-	-	5,804.75	-	0.00

IV. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

«ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 2021 թվականի պետական բյուջեի եկամուտները նախատեսվել են 1,509,462,935.9 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանով՝ 1,601,816,806.7 հազ. դրամ իսկ վեց ամիսների համար ՀՀ կառավարության 2020 թվականի 30 դեկտեմբերի N 2215-Ն որոշմամբ հաստատված եռամսյակային համամասնություններով, հաշվի առնելով հետագա ճշտումները՝ 737,976,479.8 հազ դրամ:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի եկամուտների ծրագրային և 2019, 2020 թվականների ժամանակաշրջանների համադրելի փաստացի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 1)

Եկամտատեսակը	2019թ.		2020թ.		2021թ.	
	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը
Ընդամենը, որից՝	**1,565.5**	**100.0%**	**1,560.6**	**100.0%**	**1,509.5**	**100.0%**
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,464.3	93.5%	1,385.2	88.8%	1,440.1	95.4%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	12.4	0.8%	53.2	3.4%	24.3	1.6%
3. Այլ եկամուտներ	88.8	5.7%	122.2	7.8%	45.1	3.0%

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետի պահանջներով պայմանավորված՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և վերջիններիս արդյունքում ձևավորված եկամուտները պետական բյուջեի ցուցանիշներում ներառելու հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները հաշվի առած՝ պետական բյուջեի եկամուտների տարեկան և կիսամյակի ճշտված ծրագրային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1,601.8 մլրդ դրամ և 738.0 մլրդ դրամ:

2021 թվականի տարեկան և վեց ամիսների եկամուտների ծրագրային (ճշտված) ցուցանիշների և փաստացի կատարողականի տվյալները հետևյալն են.

(Աղյուսակ 2)

մլրդ.դրամ

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Վեց ամիսների պլան	Վեց ամիսների ճշտված պլան	Վեց ամիսների փաստ	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Կատարման %-ն վեց ամիսների ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1,509.5	1,601.8	697.9	738.0	790.9	49.4%	107.2%
այդ թվում՝							
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,440.1	1,523.9	665.0	696.7	750.2	49.2%	107.7%
Պաշտոնական դրամաշնորհներ	24.3	25.9	11.6	15.1	4.3	16.8%	28.8%
Այլ եկամուտներ	45.1	52.0	21.3	26.2	36.3	69.8%	138.7%

2021 թվականի վեց ամիսների պետական բյուջեի փաստացի եկամուտները (790.9 մլն դրամ) կազմել են վեց ամիսների ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի (738.0 մլն.դրամ) 107.2%-ը, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի մուտքերը (750.2 մլն դրամ) կազմել են ճշտված ծրագրային ցուցանիշի (696.7 մլն դրամ) 107.7%-ը:

2020 թվականի վեց ամիսների համեմատ պետական բյուջեի եկամուտները աճել են 10.3%-ով կամ 74.2 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 94.9%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 0.5%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 4.6%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

2021 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 750.2 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշի 107.7%-ը:

2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերը աճել են 10.3%-ով կամ 69.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի, շահութահարկի, սոցիալական վճարի, ինչպես նաև այլ հարկերի գծով մուտքերի աճով:

ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների 2021թ. վեց ամիսների և նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատական ցուցնիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 3)
մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2020թ.			2021թ.		
		Հունվար-հունիս	տեսակ. կշիռը	Աճի տեմպ %	Հունվար-հունիս	տեսակ. կշիռը	Աճի տեմպ%
1	2	3	4	5	6	7	8
1	ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրք	680,289.3	100.0%	95.4	750,201.7	100.0%	110.3
1.1	ԱԱՀ, այդ թվում՝	213,320.1	31.4%	92.7	242,292.8	32.3%	113.6
1.1.1.	*ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար*	49,801.6	7.3%	110.3	58,460.0	7.8%	117.4
1.1.2	*Մաքսային մարմինների կողմից հավաքագրված*	76,193.2	11.2%	76.3	84,983.6	11.3%	111.5
1.2	Շահութահարկ	97,312.3	14.3%	85.7	108,837.5	14.5%	111.8
1.3	Եկամտային հարկ (այդ թվում՝ եկամտահարկ և պարտադիր սոց.ապահով. վճարներ)	206,665.0	30.4%	102.2	210,570.9	28.1%	101.9
1.4	Ակցիզային հարկ, այդ թվում՝	52,635.1	7.7%	105.5	43,754.8	5.8%	83.1
1.4.1	*ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար*	11,093.9	1.6%	151.8	7,841.2	1.0%	70.7
1.4.2	*Մաքսային մարմինների կողմից հավաքագրված*	12,291.9	1.8%	101.3	14,333.3	1.9%	116.6
1.5	Շրջանառության հարկ	14,664.5	2.2%	110.7	14,348.5	1.9%	97.8

1.6	Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար, այդ թվում՝	29,067.3	4.3%	118.3	34,004.1	4.5%	117.0
1.6.1	*ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար*	504.9	0.1%	76.3	540.7	0.1%	107.1
1.6.2	*Մաքսային մարմինների կողմից հավաքագրված*	1,928.2	0.3%	33.3	905.8	0.1%	47.0
1.7	Մաքսատուրք, այդ թվում՝	29,828.5	4.4%	73.2	42,479.5	5.7%	142.4
1.7.1	*ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված*	29,462.9	4.3%	82.0	42,426.2	5.7%	144.0
1.8	Սոցիալական վճար	10,835.1	1.6%	115.3	20,644.0	2.8%	190.5
1.9	Այլ հարկային եկամուտներ	11,190.7	1.6%	87.7	20,538.5	2.7%	183.5
1.10	Պետական տուրք	14,964.4	2.2%	87.2	16,820.0	2.2%	112.4
1.11	Հարկերի անցումային գերավճար	-193.6		-	-4,089.0		2,111.9

2021 թվականի վեց ամիսներին, ըստ ՊԵԿ կողմից ներկայացված հաշվետվության, ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 750.2 մլրդ. դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են վեց ամիսների ծրագրային ցուցանիշի 107.7%-ը: 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ավելացել են 10.3%-ով կամ 69.9 մլրդ դրամով:

2021 թվականի վեց ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքն ըստ եկամտի տեսակների հետևյալն է.

- 32.3 %-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 242.3 մլրդ. դրամ, որից 143.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 58.4 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 85.0 մլրդ դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացված արժեքի հարկի մուտքերը աճել են 13.6%-ով կամ շուրջ 29.0 մլրդ դրամով:

- 28.1%-ը ապահովվել է եկամտային հարկի (այդ թվում՝ եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների) հաշվին՝ կազմելով 210.6 մլրդ. դրամ, այն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.9 տոկոսով կամ 3.9 մլրդ դրամով:

- 14.5 %-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 108.8 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն աճել է 11.8 տոկոսով կամ 11.5 մլրդ դրամով:

- 5.8 %-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 43.8 մլրդ դրամ, որից հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 21.6 մլրդ դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 22.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 16.9%-ով կամ 8.9 մլրդ դրամով, որը պայմանավորված է հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի 26.2%-ով (7.7 մլրդ դրամով) և ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի 5.2%-ով (1,2 մլրդ դրամով) նվազմամբ:
- 5.7 %-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 42.5 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն աճել են 42.5%-ով կամ շուրջ 12.7 մլրդ դրամով:
- 4.5 %-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 34.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 17.0%-ով կամ շուրջ 4.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի աճով, որոնք կազմել են 30.2 մլրդ դրամ՝ 23.8%-ով (5.8 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը:
- 2.8 %-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին և կազմել է 20.6 մլրդ դրամ՝ 90.5%-ով կամ 9.8 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում դրույքաչափերի և համախառն եկամտի առավելագույն չափի բարձրացմամբ:
- 1.9 %-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 14.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շրջանառության հարկի մուտքերը նվազել են 2.2%-ով կամ ավելի քան 316 մլն դրամով:
- 2.7%-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 20.5 մլրդ դրամ, մասնավորապես՝ 13.4 մլրդ դրամ են կազմել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը

պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները, 3.3 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 1.7 մլրդ դրամ՝ ճանապարհային հարկը, 1.1 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքները, 553.3 մլն դրամ՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, 426.3 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 83.5%-ով կամ 9.3 մլրդ դրամով: Աճն արձանագրվել է հիմնականում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարների գծով, որոնք 3.2 անգամ կամ 9.2 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված 2021 թվականի հունվարի 1-ից օրենքում կատարված փոփոխությունների համաձայն դրոշմանիշային վճարների դրույքաչափերի բարձրացմամբ:

- 2.2%-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին և կազմել են 16.8 մլրդ դրամ՝ կազմելով հաշվետու ժամանակաշրջանի ծրագրային ցուցանիշի 86.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, պետական գրանցման և լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար սահմանված պետական տուրքերի կատարողականով: Նշված մուտքերը կազմել են համապատասխանաբար 5.8 մլրդ դրամ, 2.3 մլրդ դրամ և 4.6 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշների համապատասխանաբար 71.2%-ը, 79.2%-ը և 90.7%-ը: Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող տուրքերի առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշի համեմատ շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի և օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար բյուջե մուտքագրված տուրքերով, որոնք կազմել են համապատասխանաբար 3.4 մլրդ դրամ և 1 մլրդ դրամ՝ 38.9%-ով (2.2 մլրդ դրամով) և 30.4%-ով (448 մլն դրամով) զիջելով առաջին կիսամյակի կանխատեսված ցուցանիշը: Պետական գրանցման համար գանձվող տուրքերի կատարողականը հիմնականում պայմանավորված է ավտոմոբիլի հաշվառման համարանիշ (բացառությամբ տարանցիկ և ժամանակավոր համարանիշի) տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու, լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու և ավտոմոբիլի, մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի)

հաշվառման վկայագիր տալու համար բյուջե մուտքագրված տուրքերի կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 847.8 մլն դրամ, 358.5 մլն դրամ և 434.9 մլն դրամ՝ 29.4%-ով (353 մլն դրամով), 34.8%-ով (191.5 մլն դրամով) և 27.5%-ով (165.1 մլն դրամով) զիջելով կանխատեսված ցուցանիշը: Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի կատարողականը հիմնականում պայմանավորված է մաքսային բնագավառում գանձված տուրքերով, որոնք կազմել են 1.6 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշի 64.7%-ը: Առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշի զգալի գերազանցում է արձանագրվել հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի գծով, որոնք կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ՝ 2 անգամ (840.5 մլն դրամով) գերազանցելով առաջին կիսամյակի կանխատեսված ցուցանիշը: Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձվող տուրքերն առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշը գերազանցել են 9.5%-ով (101.1 մլն դրամով)՝ կազմելով շուրջ 1.2 մլրդ դրամ:

- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից միասնական հաշիվ փոխանցված գումարը կազմել է 4.1 մլն դրամ՝ նախորդ տարվա 193.6 մլն դրամի դիմաց:
- Համաձայն ՀՀ ՊԵԿ կողմից հրապարակված հաշվետվությունների, ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների համաձայն 2021թ. վեց ամիսների և նախորդ համադրելի ժամանակաշրջանի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների, ինչպես նաև ակցիզային հարկի և շահաբաժիններից վճարված եկամտային հարկի փոխհատուցման ենթակա գումարների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 4)

մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2020թ.	2021թ.	
		Հունվար-Հունիս	Հունվար-Հունիս	Աճի տեմպ%
1	2	3	4	5
1	ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	36,042.2	36,824.0	102.2
2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	22,924.2	31,725.5	138.4
3	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	166.4	176.6	106.1
4	Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար[1]	5,848.2	9,747.4	166.7
5	Ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	142.0	307.5	216.4
6	Շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված եզրակացություններով փոխհատուցման ենթակա գումար	83.5	731.6	876.5
7	ՀՀ Կառավարության 28.09.2017թ. թիվ 1208-Ն և ՀՀ Կառավարության 24.08.2017թ. թիվ 1048-Ն որոշումների համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված եզրակացություններով փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումար	90.2	209.5	232.4
	ԸՆԴԱՄԵՆԸ	65,296.6	79,722.1	122.1

2021թ. վեց ամիսներում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 36,824.0 մլն դրամ, որը նախորդ համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 2.2 տոկոսով, իսկ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի է 38.4 տոկոսով: ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի է կազմել 6.1 տոկոսով:

Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 66.7 տոկոսով:

Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության կապիտալում ներդնելու դեպքում այդ շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գումարների գծով պետական բյուջեից կատարված փոխհատուցումները նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է շուրջ ինն անգամ՝ կազմելով 731.6 մլն դրամ:

Ակցիզային հարկի մասով հարկատուներին պետական բյուջեից կատարված փոխհատուցումները նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 122.6 տոկոսով կամ 284.8 մլն դրամով՝ կազմելով 517.0 մլն դրամ:

2021 թվականի վեց ամիսներում ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների մասով ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

(Աղյուսակ 5)

Բյուջե մուտքերն ըստ եկամտային հաշիվների. հազ. դրամ

Ժամանակահատված	Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր	Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր	Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ	Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ
Ընդամենը	**649,958,840**	**37,330,200**	**147,034,220**	**834,323,270**
Հունվար	117,975,600	4,452,300	16,204,080	138,631,979
Փետրվար	70,386,820	5,668,550	23,116,880	99,172,257
Մարտ	98,961,570	6,624,680	27,381,420	132,967,672
Ապրիլ	163,498,130	6,979,220	25,684,050	196,161,404
Մայիս	86,399,920	7,091,480	26,762,210	120,253,608
Հունիս	112,736,800	6,513,970	27,885,580	147,136,350

*Հարկերի միասնական հաշվի մուտքերում հաշվի են առնվել վերահաշվարկները և ճշտումները

(Աղյուսակ 5.1)

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները. հազ. դրամ

Ամիս	Անցումային գերավճարից վերադարձ միասնական հաշիվ	Դեբետային գերավճարից վերադարձ միասնական հաշիվ, այդ թվում՝ ՊԵԿ եզրակացությունների համաձայն վերադարձված	Վարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսներ	ԱԱՀ-ի վերադարձ (Tax free)	Այլ ելքեր	Ընդամենը հարկերից վերադարձների գումարը
Ընդամենը	**4,088,970**	**69,009,180**	**9,734,090**	**176,590**	**1,112,700**	**84,121,532**
Հունվար	0	7,267,660	626,050	11,870	221,760	8,127,344
Փետրվար	14,200	14,510,150	3,235,310	34,720	123,200	17,917,584
Մարտ	5,410	11,008,920	705,640	23,150	89,450	11,832,563
Ապրիլ	17,770	14,752,390	1,230,890	26,160	64,990	16,092,190
Մայիս	7,970	11,703,070	2,928,040	43,510	176,320	14,858,926
Հունիս	4,043,620	9,766,990	1,008,160	37,180	436,980	15,292,925

2021թ. 6 ամիսների արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

(Աղյուսակ 5.2)

հազ.դրամ

Ամիս	**Հարկային եկամուտներ և պետական տուրքերի գումարը**
Հունվար	130,504,636
Փետրվար	81,254,673
Մարտ	121,135,109
Ապրիլ	180,069,214
Մայիս	105,394,682
Հունիս	131,843,425
Ընդամենը 2021թ. 6 ամիսներ	**750,201,739**

V. 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկային և մաքսային ծառայություններ ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային ծառայություններ միջոցառման մասով 2021թ. տարեկան ծախսերի համար 2021թ. պետական բյուջեով նախատեսվել է 21,397,634.4 հազ. դրամ գումար, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ 20,937,674.4 հազ.դրամ:
2021թ. վեց ամիսների պլանը սահմանվել է 8,885,157.5 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 8,757,354.7 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 7,831,249.3 հազ. դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 926,105.4 հազ. դրամ:

Մասնավորապես՝ սույն միջոցառման շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 7)
հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	2021թ. վեց ամիսների ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղի ծախսը	Փաստացի ծախս	Կատարման %-ը 6=4/2 x100%	Պլանի մնացորդ 7=2-4
1	2	3	4	5	6	7
Ընդամենը	**8,757,354.70**	**8,111,985.36**	**7,831,249.26**	**8,716,659.87**	**89.42**	**645,369.34**
Աշխատանքի վարձատրություն	6,827,837.80	6,827,837.80	6,551,191.18	7,263,604.95	95.95	0.00
Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր	1,929,516.90	1,284,147.56	1,280,058.08	1,453,054.92	66.34	645,369.34

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է 7,263,604.95 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 6,551,191.18 հազ. դրամ, կատարողականը ճշտված ծրագրային ցուցանիշի նկատմամբ՝ 95.95 %, վեց ամիսների վերջի դրությամբ կրեդիտորական պարտքը՝ 713,695.6 հազ. դրամ:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ծախսերի կատարողականը կազմել է 66.34 %:

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների ձեռքբերման միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի ցուցանիշները հետևյալն են.

(Աղյուսակ 8)

հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	2021թ. վեց ամիսների ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս
1	2	3	4	5
Ընդամենը	**5,264,280.0**	**2,728,008.0**	**2,728,008.0**	**2,692,495.45**
Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	2,429,280.0	1,376,280.0	1,376,280.0	517,232.03
Դրոշմապիտակների ձեռքբերում	2,835,000.0	1,351,728.0	1,351,728.0	2,175,263.42

Նշված ծրագրերով շողումները պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա վերջի դրությամբ պահեստավորված ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների օգտագործման հանգամանքով, որոնց մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է համապատասխանաբար՝ 1,500,202.8 հազ.դրամ և 1,892,004.95 հազ.դրամ:

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառումով 2021թ. տարեկան և վեց ամիսների ճշտված պլանները կազմել են համապատասխանաբար 2,480,100.0 հազ. դրամ և 1,367,630.0 հազ.դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսավորման գումարը և դրամարկղի ծախսը կազմել են 132,418.9 հազ.դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնման գործընացների կազմակերպման՝ տեխնիկական բնութագրերի ուշացումով կազմման և առկա մնացորդներով պահանջարկի բավարարման հանգամանքներով:

4. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ միջոցառումով 2021 թվականի վեց ամիսների ճշտված պլանը կազմել է 8,469.7 հազ. դրամ, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 8,110.4 հազ.դրամ: Պլանավորված և փաստացի ծախսված գումարների տարբերությունը կազմել է 359.3 հազ.դրամ, ինչը պայմանավորված է գործուղման հաշվետվությունը ուշ է ներկայացվելև վճարումը կատարվել է հուլիս ամսին:

5. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձաքննությունների ծառայությունների միջոցառումով 2021թ. վեց ամիսների ճշտված պլանը կազմել է 4,664.3 հազ. դրամ, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 2,552.85 հազ.դրամ: Պլանավորված և փաստացի ծախսված գումարների տարբերությունը կազմել է 2,111.45 հազ.դրամ: Պլանավորված թվով 117 փորձաքննության համեմատ փաստացի կատարվել է 116 փորձաքննություն կամ նախատեսվածի 99.1 տոկոսը, սակայն փաստացի ծախսվել է նախատեսված միջոցների 54.7 տոկոսը:

6. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների գծով ծախսերը կազմել են 37,599.72 հազ. դրամ, կատարողականը կազմել է 100 %:

7. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում միջոցառման շրջանակներում ծախսերի կատարողականը կազմել է 100 տոկոս: Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղի ծախսը կազմել է 80,488.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 62,475.4 հազ. դրամ: Հաշվետու

ժամանակաշրջանում նախատեսվել է թվով 1212 հարկային և մաքսային ծառայողների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ (թվով 25 դասընթաց 99 ուսումնական խմբերով): Վերապատրաստումները իրականացվել են պլանավորված դասընթացների և ուսումնական խմբերի քանակներին համապատասխան, սակայն մասնակիցների թվաքանակը նվազել է 317 ծառայողով՝ կազմելով 895 մասնակից:

8. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՊԵԿ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 17.06.2021թ. թիվ 988-Ն որոշմամբ, Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ նախատեսվել է անցկացնել ՊԵԿ աշխատակիցների ուսուցում և հաշվետվությունների ներկայացման բջջային հավել-վածների մշակման միջոցառման ծրագրի աուդիտ, որի համար 2021թ. վեց ամիսների ճշտված պլանով ծրագրվել է 1,510.2 հազ.դրամի միջոցներ: Հաշվի առնելով, որ որոշումը ուժի մեջ է մտել 18.06.2021թ-ին՝ ժամանակի սղության հետևանքով գնման գործընթացը հաշվետու ժամանակաշրջանում չի իրականացվել:

9. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում միջոցառման շրջանակներում ծախսերի կատարողականը կազմել է 66.4 տոկոս: Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը կազմել է 15,350.1 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղի ծախսը՝ 10,193.7 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 10,432.9 հազ. դրամ: Շեղումը պայմանավորված է կառուցապատվող տարածքի տարածքի ջրամատակարարման և կոյուղագծի տեխնիկական պայմանների փոփփխության հետ:

10. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՋՋԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Միջոցառման իրականացումը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 17.06.2021թ. թիվ 988-Ն որոշմամբ, որով նախատեսվել է հաշվետվությունների ներկայացման համար մշակել թվով երկու բջջային հավելվածներ:

Միջոցառման համար 2021թ. վեց ամիսների ճշտված պլանով նախատեսվել է 36,244.2 հազ.դրամ գումար: Հաշվի առնելով, որ որոշումը ուժի մեջ է մտել 18.06.2021թ-ին՝ ժամանակի սղության հետևանքով գնման գործընթացը հաշվետու ժամանակաշրջանում չի իրականացվել:

11. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ

Կենշաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակներում կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին միջոցառման մասով 2021 թվականի տարեկան և վեց ամիսների ճշտված պլանները կազմել են համապատասխանաբար՝ 56,645,348.2 հազ. դրամ և 37,596,348.0 հազ. դրամ: Դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 37,430,019.5 հազ.դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 166,328.5 հազ. դրամ: Մասնակիցների պլանային թվաքանակի (325,410 մարդ) համեմատ փաստացի ցուցանիշը՝ համաձայն ՊԵԿ ՏՏ ստորաբաժանման ամփոփած տվյալների՝ կազմել է 390,121 մարդ կամ 64,711-ով ավելի:

12. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի շրջանակներում ՊԵԿ աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար 2021թ. պետական բյուջեի տարեկան և վեց ամիսների ճշտված պլանները համապատասխանաբար կազմել են՝ 225,864.0 հազ. դրամ և 89,400.0 հազ. դրամ: 2021թ. վեց ամիսների դրամարկղի ծախսը կազմել է 79,675.5 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 9,724.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 89.1%-ը:

Շահառուների նախատեսված թվաքանակը կազմել է 2980, սակայն սոցիալական փաթեթից օգտվել են 2656 աշխատակից՝ նախատեսվածից 324 աշխատակցով պակաս, որը պայմանավորված է աշխատողների աշխատանքի ընդունման վեց ամիսը լրացած չլինելու և շահառուների ցանկում չընդգրկվելու, ինչպես նաև ոմանց կողմից դիմումներ չներկայացնելու հանգամանքներով:

13. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասով 2021թ. պետական բյուջեի վեց ամիսների ճշտված պլանը, ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 12,293,110.99 հազ. դրամ:

Վճարումները կատարվել են ՊԵԿ ՏՏ ստորաբաժանման կողմից տրամադրված՝ փաստացի վճարումների անհատականացված տվյալների հիման վրա:

14. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ (COVID-19) ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ 23-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում նախատեսվել է օժանդակել զբոսաշրջության ոլորտում գործունեություն իրականացնող շուրջ 1500 տնտեսվարողների, որի համար 2021թ. պետական բյուջեի տարեկան և վեց ամիսների ճշտված պլաններով նախատեսվել է 4,424,700.0 հազ.դրամ գումար: Սույն միջոցառման շրջանակներում փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 3,170,737.4 հազ.դրամ, ինչը պայմանավորվել է այն հանգամանքով, որ աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 1216 շահառու:

VI. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

VII. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկություններ չեն ներկայացվել:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ